

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ




Սուրբ Թարգմանչաց տոնը
հայ ժողովրդի ազգային-
եկեղեցական տոներից է,
նշվում է Սուրբ Խաչի
տոնի չորրորդ կիրակիին
հաջորդող շաբաթ օրը:
Խորհրդանշում է հայոց
գրերի
գյուտը, Աստվածաշնչի
հայերեն առաջին
թարգմանությունը,
թարգմանչաց շարժումն ու
հայ դպրության սկիզբը:

*Ս. Մեսրոպ վարդապետը Սահակ Պարթև կաթողիկոսի օրհնությամբ
և Վրամշապուհ արքայի աջակցությամբ ձեռնամուխ եղավ հայոց
տառերի ստեղծմանը, այնուհետև Աստվածաշնչի թարգմանությանը:*



Ըստ ավանդության՝ նա
մի պահ հայացքը թեքել
է այն մագաղաթից, որի
վրա գրում էր, և նկատել
է Աստծո ձեռքը, որը
ձախից աջ գրում էր
այբուբենի տառերը[?]

Գրերի գյուտից
անմիջապես հետո
Մեսրոպ Մաշտոցը,
Սահակ Պարթևն ու
նրանց աշակերտներն
անցան թարգմանական
աշխատանքներին:



ՀԵՊ ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան

Առաջին նախադասությունը եղավ Սողոմոնի «Առակաց գրքից» թարգմանված հատվածը. «Ճանաչել գիմաստությունն և գիտրատ, իմանալ զբանս հանճարոյ»:



ԱՆԱՉԵԼ

ՉԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ՉԽՐԱՄ,

ԻՄԱՆԱԼ

ՉԲԱՆՍ

ՀԱՆՃԱՐՈՅ:



Օջականում ամեն տարի մեծ հանդիսավորությամբ նշում են Թարգմանչաց տոնը: Այստեղ է ամփոփված Մեսրոպ Մաշտոցը: Նրա գերեզմանը գտնվում է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու խորանի տակ: Այն սրբազան ուխտավայր է բոլոր հայերի համար: Օջականում է գտնվում նաև հայոց այբուբենին նվիրված հուշարձանը:



ՀԵՊ ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան